*Հումանիտար գիտությունների ֆակուլտետ*
*«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտություն,*
*առաջին կուրս, Մհեր Մկրտումյան*

## *«ՆԱՄԱԿ ԶԻՆՎՈՐԻՆ» ԹԵՄԱՅՈՎ ԷՍՍԵ*

Բարև՛, Քյարա՛մ Սլոյան, բարև՛, Ռոբե՛րտ Աբաջյան, բարև՛, Արմենա՛կ Ուրֆանյան, բարև՛, Զինվո՛ր:

Չէ՛, ես խելքս չեմ թռցրել. ես գիտեմ՝ նահատակներին նամակ չեն գրում: Բայց ես գրում եմ ձեզ, քանզի հավատում եմ, ավելին՝ վստահ եմ, որ դուք երկնքից անգամ հսկում եք մեր սահմանները, իմ սահմանապահ ու հավերժի ճամփորդ դարձա՛ծ եղբայրներ:

Սիրտս մղկտում է քեզ համար, Քյարա՛մ, դու քսանը չբոլորեցիր:

Սիրտս մղկտում է քեզ համար, Մոնումենտցի Կյաժ, դու էլ չդարձար քսան տարեկան:

Սիրտս մղկտում ու թելի պես բարակ է մանում, երբ էկրանի վրա նայում եմ մորդ արցունքախեղդ աչքերին, Արմենա՛կ տղա:

Ճիշտ է, ուղեղս այլ բան է թելադրում, բայց սրտին ախր բան չես հասկացնի:

Գիտե՞ս, Քյարա՛մ, մենք կառուցել ենք քո այնքա՛ն երազած տունը, որտեղ դեռ թևածում է հին օրերի ծանոթ երգը, որին մայրդ ականջալուր է օրնիբուն՝ իր ազգային սրտակեղեք դնդնոցով…

Միայն տեսնեիր քրոջդ «Վերջին զանգը», Ռոբե՛րտ, դիմանալ էր պետք… Քարե արցունքի ծանրությամբ «Վերջին զանգը»: Վերջերս քո անունով դպրոց անվանակոչեցին: Սովորաբար դպրոցների ճակատին գրում են. «Ճանաչել զիմաստություն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ...»:

Ես քո անունով դպրոցի ճակատին կգրեի որդան կարմիրով՝ «Էս դիրքը հանձնողի...»: Եվ դա ավելի ճիշտ կլիներ՝ ժամանակին համահունչ, թե չէ «Ճանաչել զիմաստությունը...» մի տեսակ հնացել է, համ էլ մեր թշնամին իմաստության լեզուն չի՛ հասկանում…

Սերդ որբացել է, Արմենա՛կ, որբացել է սերդ, որ ապրիլյան քառօրյային ապրեց գուցե չորս, գուցե քառասուն, գուցե չորս հարյուր, իսկ գուցեն չորս հազար տարվա կյանք: Ո՞վ իմանա…

Նայում եմ ձեր նվիրական պատկերներին, ու սրտիս զարկերն արագանում են: Ու ես հասկանում եմ, որ սիրում եմ բոլորիդ, ինչպես իմ երակներով հոսող արյունն եմ սիրում, ես՝ ձեր շարունակությունը, դուք՝ իմ գոյության առհավատչյան:

Այդ ինչպե՞ս կարողացաք ձեր հոգու ամբողջ տարողունակությամբ ափիբերան թողնել էս անտեր-անտիրական աշխարհը, որը մեր խաղաղ ապրելուց շա՛տ է վախենում...

Ժամանակը գլուխը կախ ու անտարբեր առաջ է ընթանում: Երկինքը նույն երկինքն է, կապույտը նույն կապույտը, արևը նույն արևը… Բայց աշխարհում կարծես ինչ-որ բան է խաթարվել: Ինչ-որ բան է խրվել իմ, մեր, բոլորիս ուղեղների մեջ ու հանգիստ չի տալիս՝ Հիշողությունը, մի բան, որ նահատակներին պետք չէ, ես գիտեմ, բայց ապրողներիս շա՛տ է հարկավոր…

Իմ նամակն անվերջ է, այն հավերժ է ձեր հիշատակի նման, ու ես վերջակետ չեմ դնում

Առա՛յժմ, Քյարա՛մ, առա՛յժմ, Կյա՛ծ, առա՛յժմ, Արմենա՛կ, առա՛յժմ, Զինվո՛ր